

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ Ի ԴԵՄՍ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ, ՄԻԶԵՎ ՄԻՆՉԵՎ 35 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ՉԱՓՈՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՆԻ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

14 ապրիլի 2011թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյթունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասրանի Նանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 22-ին ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ մինչեւ 35 միլիոն եվրոյի չափով դրամաշնորհի համաձայնագրում ամրագրված պարավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապարասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի՝ 2011 թվականի ապրիլի 4-ին Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Նախագահի պաշտոնական ներկայացուցչի բացատրությունները, հեղափոխելով 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ մինչեւ 35 միլիոն եվրոյի չափով դրամաշնորհի համաձայնագիրը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Յ**.

1. Նայասրանի Նանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ մինչեւ 35 միլիոն եվրոյի չափով դրամաշնորհի համաձայնագիրը (Նամաձայնագիր) ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին՝ Բրյուսելում:

2. Նամաձայնագրով Եվրոպական միությունը Խորհրդի (2009/890/ԵՏ) որոշման եւ 2011 թվականի փետրվարի 15-ին Նայասրանի Նանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջեւ կնքված փոխըմբռնման հուշագրում (Փոխըմբռնման հուշագիր) սահմանված պայմանների համաձայն Նայասրանի Նանրապետությանը փրամադրում է մինչեւ 35 միլիոն եվրոյի չափով դրամաշնորհ (Դրամաշնորհ)՝ ուղղված արտաքին ֆինանսական սահմանափակումները նվազեցնելուն, կայուն վճարային հաշվեկշռի աջակցմանը եւ Նայասրանի արտաբաժնային պահուստների վիճակի պահպանմանը: Առաջին մասնավճարը կկազմի 14 միլիոն եվրո, իսկ երկրորդ մասնավճարը՝ մինչեւ 21 միլիոն եվրո: Նիշյալ գումարների փրամադրումը կախված կլինի Արժույթի միջազգային հիմնադրամի եւ Նայասրանի Նանրապետության միջեւ ձեռք բերված՝ ընդարձակ ֆինանսավորման համակարգի եւ ընդարձակ վարկավորման համակարգի ներքո պայմանավորվածության կամ դրանց հաջորդող պայմանավորվածությունների իրականացման բավարար առաջընթացից, ինչպես նաեւ փնտեսական կայունացման եւ կառուցվածքային բարեփոխումներում ձեռք բերված առաջընթացի վերաբերյալ Եվրոպական հանձնաժողովի (Եվրոպական միության անունից) դրական գնահատականից: Դրամաշնորհի երկրորդ մասնավճարի հարկացումը կախված կլինի Նայասրանի իշխանությունների հետ համագործակցությամբ իրականացվող Նանձնաժողովի ուսումնասիրությունից՝ կապված այն առաջընթացի հետ, որն արձանագրվել է Փոխըմբռնման հուշագրում համաձայնեցված կառուցվածքային բարեփոխումների չափորոշիչների մասով: Սույն աջակցության շրջանակներում փրամադրվելիք գումարի չափը հաշվարկելիս պարզաճ կերպով հաշվի կառնվեն այլ դոնորների կողմից Նայասրանին փրամադրվելիք ֆինանսական

աջակցության արդյունավետ ներգրավումը, ինչպես նաև հեղափոխական ֆինանսական կարիքները:

Դրամաշնորհի գումարը փոխանցվում է Նայասրանի Նանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի՝ եվրոյով բացված հաշվին, որը պահվում է Նայասրանի Նանրապետության կենտրոնական բանկում եւ գործում է Նայասրանի անունից՝ որպես գործակալ:

3. Նամաձայնագրով Նայասրանի Նանրապետությունը, մասնավորապես, սրանձնում է հետևյալ պարտավորությունները.

ա) Դրամաշնորհն օգտագործել բացառապես Նամաձայնագրով եւ Փոխըմբռնման հուշագրով սահմանված պայմանների համար.

բ) վճարել բոլոր ծախսերը, որոնք առաջացել են Դրամաշնորհի ֆինանսական գործարքների մասով.

գ) հայտարարել, որ Նամաձայնագրի շրջանակներում Եվրոպական հանձնաժողովի կողմից Նայասրանին կատարված բոլոր վճարումներն ու փոխանցումները, ինչպես նաև Նամաձայնագիրը, ենթակա չեն հարկման որևէ հարկաբեկակով Նամաձայնագրի գործողության ամբողջ ընթացքում:

Նամաձայնագրով սահմանվում են նաև փեսչական սպուգումների, խարդախության կանխարգելման, աուդիտի, Նամաձայնագրի դադարեցման, կողմերի միջև վեճերի կարգավորման, Նամաձայնագրի ուժի մեջ մտնելու եւ ավարտի հետ կապված հարաբերությունները:

4. Նամաձայնագրով Նայասրանի Նանրապետության սրանձնած պարտավորությունները համահունչ են Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 8 եւ 9-րդ հոդվածների դրույթներին, կոչված են զարգացնելու կողմերի միջև բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ, ինչպես նաև ստեղծելու իրավական ու ֆինանսական բարենպաստ պայմաններ փնտեսական գործունեության ազատության եւ ազատ փնտեսական մրցակցության ծավալման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ստորագրված՝ Նայասրանի Նանրապետության եւ Եվրոպական հանձնաժողովի՝ ի դեմս Եվրոպական միության, միջև

մինչև 35 միլիոն եվրոյի չափով դրամաշնորհի համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14 ապրիլի 2011 թվականի
ՍՂՈ-956